


Հաստատված է
Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի կոլեգիալ
կառավարման խորհրդի թիվ 4 (31.08.2021թ.) նիստում
Նախագահ՝ 

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի
ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ
ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

2021թ.

Սույն փաստաթուղթը նպատակ ունի ապահովելու քոլեջի համար էթիկայի կանոնագրքի ընդունման հիմքերը: Սույն տիպային կանոնագրքի առաջարկները պետք է արտացոլվեն համապատասխան հաստատության ներքին կանոնադրություններում, կանոններում և ընթացակարգերում:

Սկզբունքները

ՀՀ օրենսդրության համաձայն նշանակված կամ ընտրված վարչական աշխատակազմի անդամների վարքագիծը պետք է համապատասխանի էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքների: Այդ սկզբունքները պետք է կիրառելի լինեն քոլեջի վարչական աշխատակազմի անդամների նկատմամբ՝

- 1) հաստատության կառավարման և ղեկավար բաժինների,
- 2) օժանդակ աշխատակազմի,
- 3) ուսանողների:

Կառավարման մարմիններ

Էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքների համաձայն ուսումնական յուրաքանչյուր հաստատություն պետք է ընդունի և հրապարակի էթիկայի կանոնագիրք վարչական աշխատակազմի համար, որն առնվազն պետք է ներառի այս սկզբունքները և գործող օրենսդրության համաձայն նախատեսի սանկցիաներ՝ դրանք չպահպանելու համար:

Ղեկավարներ

Էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքների համաձայն՝ ոսումնական յուրաքանչյուր հաստատություն պետք է նաև ընդունի և հրապարակի էթիկայի կանոնագիրք ղեկավարների համար, այդ թվում՝ և համապատասխան ու նույնատիպ պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև վարչական աշխատակազմի համար, որոնք ունեն ղեկամավարման իրավասություն: Կանոնագիրքը պետք է առնվազն ներառի այս սկզբունքները և նախատեսի սանկցիաներ՝ դրանք չպահպանելու համար, գործող օրենսդրության համաձայն:

Բարեվարքություն

Կրթական ոլորտի դերակատարների վարքագիծը համահունչ է մի շարք դրական, բարոյական և էթիկական սկզբունքներին ու չափանիշների, որոնք հենվում են հիմնական արժեքների վրա:

Ազնվություն

Քոլեջի բոլոր դերակատարները պետք է մշտապես խուսափեն ցանկացած խարդախությունից, ստախոսությունից, խաբեությունից, գողությունից, շորթումից կամ որևէ այլ անազնիվ արարքից:

Ճշմարտություն

Քուլեջի բոլոր դերակատարները պետք է <<Ճշմարտությունն>> ասեն և չստեն քուլեջի ներսում իրականացվող ցանկացած տիպի հաղորդակցության ժամանակ:

Թափանցիկություն

Այս սկզբունքը պահանջում է ազատորեն հանրայնացնել ոչ միայն քուլեջի որպես կազմակերպության, այլև քուլեջի բոլոր դերակատարների՝ որպես անհատների մասին տեղեկատվությունը, և այս պարտականության շրջանակը տարբեր է՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ դերակատարի մասին է խոսք գնում:

Հարգանք այլոց հանդեպ

Քուլեջի բոլոր դերակատարները պետք է ցուցաբերեն բոլոր շահառուների և շահագրգիռ կողմերի արժանապատվության, ինչպես նաև ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության նկատմամբ հարգանք, ճանաչեն դերակատարների՝ իրենց մասնավոր կյանքը պաշտպանելու և ֆիզիկական ու հոգեբանական բռնությունից պաշտպանված լինելու ընդհանուր իրավունքները:

Վստահություն

Քուլեջի բոլոր դերակատարները կարող են միանգամայն վստահ լինել միմյանց նյատմամբ ազնվության, ճշմատացիության և բարևարքության դրսևորման հարցում:

Հաշվետվողականություն

Քուլեջի բոլոր դերակատարները պատասխանատու են իրենց լիազորությունները պատշաճ կատարելու համար:

Արդարացիություն

Քուլեջի բոլոր դերակատարները միմյանց նկատմամբ պետք է վարվեն անկողմնական, առանց խտրականության և ազնիվ դրսևորումների:

Հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն:

Քուլեջի բոլոր դերակատարները պետք է պահպանեն կայունության, հավասարության և արդարության՝ կրթական և սոցիալական արժեքները, ինչպես նաև ճանաչեն ապագա և ներկա սերունդների իրավունքներն ու պարտականությունները: Պետք է գործնականում կիրառեն արդար, թափանցիկ, ներառական և կայուն քաղաքականություն և գործելակերպ՝ կապված տարիքի, հաշմանդամության, գենդերի և գենդերային ինքնության, ռասայի էթնիկ պատկանելիության, կրոնի և դավանանքի ու սեռական կողմնորոշման հետ, պետք է ապահովեն բարձրագույն կրթության հասանելիությունը՝ ակադեմիական որակավորում ունեցող հնարավորինս մեծ քանակի անձանց համար:

